Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1366-05.06.2026-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «նախատեսված իրավահարաբերությունների վրա» բառերը փոխարինել «հաշվառված ինքնակամ կառույցների վրա՝ նույն մասով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ» բառերով,

2) 3.1-ին մասի երկրորդ նախադասությունում «ծավալում» բառից հետո լրացնել «կամ ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից» բառերը,

3) 3.1-ին մասի երկրորդ նախադասությունում «արտացոլված» բառից հետո լրացնել «բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի ծավալում կամ ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից առկա ինքնակամ կառույցի» բառերը,

4) 3.1-ին մասի երրորդ և չորրորդ նախադասությունները հանել,

5) 3.1-ին մասում «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում կառուցված եւ օրինականացված ինքնակամ կառույցները» բառերը փոխարինել «Կառավարությունը սահմանում է պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա օրինականացման ենթակա ինքնակամ կառույցների ցանկ, որում ներառված ինքնակամ կառույցները օրինականացվելուց հետո» բառերով,

6) 3.1-ին մասում «դեպքերի:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Կառավարության համապատասխան որոշումը պետք է պարունակի ինքնակամ կառույցի կառուցման տարեթիվը, գտնվելու վայրը եւ ինքնակամ կառույցը նույնականացնող այլ տվյալներ:»,

7) լրացնել նոր 3.2-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«3.2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ամբողջությամբ ինքնակամ հանդիսացող այն կառույցները, որոնք կառուցվել են, այդ թվում, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից հետո, կարող են Կառավարության կողմից հաստատվող օրինականացման ենթակա ինքնակամ շինությունների ցանկում ընդգրկվելու համար Կառավարության սահմանած կարգով հաշվառվել Կադաստրի կոմիտեում եւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել սույն մասով սահմանված փաստաթղթեր՝ մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 30-ը: Կառավարության կողմից հաստատվող օրինականացման ենթակա ինքնակամ շինությունների ցանկում ընդգրկվելու համար ինքնակամ կառույցն իրականացրած անձինք Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնում են՝ ինքնակամ կառույցի հաշվառման հաստատումը հավաստող չափագրման ծածկագիրը, քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման եւ հետազննման ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա՝ լիցենզիային կից շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննության եւ անձնագրավորման համապատասխան ներդիր ունեցող անձի կամ կազմակերպության կողմից տրված դրական եզրակացություն, որն առնվազն պետք է բովանդակի կառույցի տեխնիկական վիճակի, կրող կոնստրուկցիաների հուսալիության եւ ամրության, սեյսմիկ անվտանգության, անվտանգ շահագործման հնարավորության վերաբերյալ տվյալներ, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի դրական եզրակացությունը հակահրդեհային պահանջներին համապատասխանության վերաբերյալ, օրինականացման որոշում կայացնող իրավասու մարմնի կողմից քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումների բացակայության, երրորդ անձանց, պետության կամ համայնքի իրավունքների եւ օրենքով պահպանվող շահերի խախտման կամ նման խախտում ստեղծող վտանգի, ինչպես նաեւ ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման՝ Կառավարության սահմանած կարգով նախատեսված մերժման հիմքերի բացակայության գրավոր նախնական գնահատություն: Սույն մասով սահմանված կարգով Կառավարության հաստատած ցանկում ընդգրկված ինքնակամ կառույցները կարող են օրինականացվել Կառավարության սահմանած կարգով՝ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքով սահմանված տեղական տուրքի վճարման պայմանով, բացառությամբ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորման կամ համաֆինանսավորման հաշվին կառուցված՝ Կառավարության

հաստատած ցանկում ընդգրկված ինքնակամ կառույցների, որոնք ազատվում են սույն պարբերությամբ սահմանված տեղական տուրքի վճարման պարտավորությունից:»,

8) 4-րդ մասում «կանոնները» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ մասով նախատեսված դեպքերի,» բառերը:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-6-րդ մասերով սահմանված դրույթները տարածվում են նաեւ 2025 թվականի դեկտեմբերի 30-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, Կառավարությունն ընդունում է սույն օրենքով նախատեսված ինքնակամ կառույցների հաշվառման կարգը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ ամսվա ընթացքում, Կառավարությունն ընդունում է սույն օրենքից բխող ինքնակամ կառույցների օրինականացման կարգը:

5. Կառավարությունը մինչեւ 2028 թվականի փետրվարի 20-ը հաստատում է սույն օրենքով նախատեսված օրինականացման ենթակա ինքնակամ շինությունների ցանկը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կ-1366-05.06.2026-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~2021 թվականի դեկտեմբերի 16-ի~~ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N ՀՕ-397-Ն ~~(այսուհետ՝ Օրենք)~~ օրենքի 2-րդ հոդվածում.

1) 2-րդ մասում «նախատեսված իրավահարաբերությունների վրա» բառերը փոխարինել «հաշվառված ինքնակամ կառույցների վրա՝ նույն մասով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ» բառերով,

2) 3.1-ին մասի երկրորդ նախադասությունում «ծավալում» բառից հետո լրացնել «կամ ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից» բառերը,

3) 3.1-ին մասի երկրորդ նախադասությունում «արտացոլված» բառից հետո լրացնել «բազմաբնակարան ~~շենքի~~ կամ ստորաբաժանված շենքերի ծավալում կամ ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից առկա ինքնակամ կառույցի» բառերը,

4) 3.1-ին մասի երրորդ ~~նախադասությունը~~ և չորրորդ նախադասությունները հանել,

5) 3.1-ին մասում «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում կառուցված եւ օրինականացված ինքնակամ կառույցները» բառերը փոխարինել «Կառավարությունը սահմանում է պետությանը կամ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա օրինականացման ենթակա ինքնակամ կառույցների ցանկ, որում ներառված ինքնակամ կառույցները օրինականացվելուց հետո» բառերով,

6) 3.1-ին մասում «դեպքերի:» բառից հետո լրացնել նոր նախադասություն հետեւյալ բովանդակությամբ.

«Կառավարության համապատասխան որոշումը պետք է պարունակի ինքնակամ կառույցի կառուցման տարեթիվը, գտնվելու վայրը եւ ինքնակամ կառույցը նույնականացնող այլ տվյալներ:»,

7) լրացնել նոր 3.2-րդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

«3.2. Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում առկա ամբողջությամբ ինքնակամ հանդիսացող այն կառույցները~~ (կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածները)~~, որոնք կառուցվել են, այդ թվում, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ժամկետից հետո, կարող են Կառավարության կողմից հաստատվող օրինականացման ենթակա ինքնակամ շինությունների ցանկում ընդգրկվելու համար Կառավարության սահմանած կարգով հաշվառվել Կադաստրի կոմիտեում եւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել սույն մասով սահմանված փաստաթղթեր՝ մինչեւ 2027 թվականի դեկտեմբերի 30-ը: Կառավարության կողմից հաստատվող օրինականացման ենթակա ինքնակամ շինությունների ցանկում ընդգրկվելու համար ինքնակամ կառույցն իրականացրած անձինք Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնում են՝ ինքնակամ կառույցի հաշվառման հաստատումը հավաստող չափագրման ծածկագիրը, քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման եւ հետազննման ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա՝ լիցենզիային կից շենքերի եւ շինությունների տեխնիկական վիճակի հետազննության եւ անձնագրավորման համապատասխան ներդիր ունեցող անձի կամ կազմակերպության կողմից տրված դրական եզրակացություն, որն առնվազն պետք է բովանդակի կառույցի տեխնիկական վիճակի, կրող կոնստրուկցիաների հուսալիության եւ ամրության, սեյսմիկ անվտանգության, անվտանգ շահագործման հնարավորության վերաբերյալ տվյալներ, ~~<<~~Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի դրական եզրակացությունը հակահրդեհային պահանջներին համապատասխանության վերաբերյալ, օրինականացման որոշում կայացնող իրավասու մարմնի կողմից քաղաքաշինական նորմերի եւ կանոնների էական խախտումների բացակայության, երրորդ անձանց, պետության կամ համայնքի իրավունքների եւ օրենքով պահպանվող շահերի խախտման կամ նման խախտում ստեղծող վտանգի, ինչպես նաեւ ինքնակամ կառույցների օրինականացման եւ տնօրինման՝ Կառավարության սահմանած կարգով նախատեսված մերժման հիմքերի բացակայության գրավոր նախնական գնահատություն: Սույն մասով սահմանված կարգով Կառավարության հաստատած ցանկում ընդգրկված ինքնակամ կառույցները ~~(կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածները)~~ կարող են օրինականացվել Կառավարության սահմանած կարգով՝ «Տեղական տուրքերի եւ վճարների մասին» օրենքով սահմանված տեղական տուրքի վճարման պայմանով, բացառությամբ պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորման կամ համաֆինանսավորման հաշվին կառուցված՝ Կառավարության հաստատած ցանկում ընդգրկված ինքնակամ կառույցների~~ (կիսակառույց ինքնակամ~~

~~կառույցների հատվածների),~~ որոնք ազատվում են սույն պարբերությամբ սահմանված տեղական տուրքի վճարման պարտավորությունից:»,

8) 4-րդ մասում «~~վրա~~ Կանոնները» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 3.2-րդ մասով նախատեսված դեպքերի,» բառերը:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 1-ին հոդվածի 1-6-րդ մասերով սահմանված դրույթները տարածվում են նաեւ 2025 թվականի դեկտեմբերի 30-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունն~~ Կառավարությունն ընդունում է սույն օրենքով նախատեսված ինքնակամ կառույցների հաշվառման կարգը:

4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ հինգ ամսվա ընթացքում, ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունն~~ Կառավարությունն ընդունում է սույն օրենքից բխող ինքնակամ կառույցների օրինականացման կարգը:

5. ~~Հայաստանի Հանրապետության կառավարությունը~~ Կառավարությունը մինչեւ 2028 թվականի փետրվարի 20-ը հաստատում է սույն օրենքով նախատեսված օրինականացման ենթակա ինքնակամ շինությունների ցանկը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1366-05.06.2026-ՊԻ-011/1), ««ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-13661-05.06.2026-ՊԻ-011/1) ԵՎ ««ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-13662-05.06.2026-ՊԻ-011/1) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1366-05.06.2026-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանման հիշատակումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, ինչպես նաև հանել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը, քանզի Նախագծում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կատարելու մասին» օրենքին այլևս հղում չի կատարվում:		
2.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մաս	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով Օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվող փոփոխության իրավական որոշակիությունն ապահովելու և կարգավորումը հստակեցնելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «կառույցների վրա» բառերից հետո լրացնել «՝ նույն մասով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված 3-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսվում է Օրենքի 2-րդ հոդվածի 3.1-ին մասի երկրորդ նախադասությունում «արտացոլված» բառից հետո լրացնել «բազմաբնակարան շենքի ծավալում կամ ծավալից դուրս՝ բնակարանին կամ ոչ բնակելի տարածքին կից առկա ինքնակամ կառույցի» բառերը: Մինչդեռ Օրենքի 2-րդ հոդվածի 3.1-ին մասի գործող խմբագրությամբ կարգավորումը վերաբերում է ոչ միայն բազմաբնակարան, այլև ստորաբաժանված շենքերի ծավալում առկա ինքնակամ կառույցների հաշվառմանը: Հետևաբար, միայն բազմաբնակարան շենքերին վերաբերող ձևակերպման ամրագրումը կարող է անհամապատասխանություն առաջացնել	Ընդունվել է:	Ընդունվել է:

			նույն նորմի կարգավորման առարկայի և հասցեատերերի շրջանակի միջև:շ Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով նախատեսված լրացման մեջ «շենքի» բառերը փոխարինել «կամ ստորաբաժանված շենքերի» բառերով՝ նշված անհամապատասխանությունը վերացնելու նպատակով:		
4.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասում տեղ գտած վրիպակը շտկելու նպատակով առաջարկում ենք «նախադասությունը» բառը փոխարինել «և չորրորդ նախադասությունները» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 7-րդ մաս	Նկատի ունենալով, որ Նախագծի 1-ին հոդվածի 7-րդ կետում կիրառվում է «ամբողջությամբ ինքնակամ հանդիսացող» ձևակերպումը՝ իրավական որոշակիություն ապահովելու և տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք Նախագծից հանել «(կիսակառույց ինքնակամ կառույցների հատվածները)» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
6.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 7-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 7-րդ մասով Օրենքի 2-րդ հոդվածում լրացվող նոր՝ 3.2-րդ մասում առաջարկում ենք բացառել «ՀՀ» հապավման կիրառումը, այն փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով կամ հանել՝	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված կանոնը, որի համաձայն. «Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ:»:		
7.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածի 8-րդ մաս	Նախագծի 1-ին հոդվածի 8-րդ մասում տեղ գտած վրիպակը շտկելու նպատակով առաջարկում ենք «վրա» բառը փոխարինել «կանոնները» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
8.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 3-5-րդ մասեր	Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի «Հայաստանի Հանրապետության կառավարություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով առաջարկում ենք փոխարինել «Կառավարություն» բառով՝ համապատասխան հոլովաձևերով՝ հիմք ընդունելով Սահմանադրությամբ կիրառված հասկացությունը: Սույն դիտարկումը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում սահմանված դրույթներից:	Ընդունվել է:	Ընդունվել է:
««ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-13661-05.06.2026-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ					
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածում «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) լրիվ անվանման	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հիշատակումը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:		
2.	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Իրավական որոշակիություն և հստակություն ապահովելու, գործող օրենսդրությամբ նախատեսված կարգավորումները հաշվի առնելու, ինչպես նաև միևնույն եզրույթների և հասկացությունների միասնական կիրառությունն ապահովելու նպատակով առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով կատարվող լրացման մեջ «ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման և» բառերը փոխարինել «նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու համար սահմանված տեղական վճարի (առկայության դեպքում)» բառերով: Միաժամանակ, տարաբնույթ մեկնաբանություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք հստակեցնել, որ վճարման ենթակա է համապատասխան տեղական վճարի եռապատիկի և շինարարության թույլտվության տրամադրման համար ավագանու որոշմամբ սահմանված կարգով հաշվարկված	Ընդունվել է:	Ընդունվել է:

			տեղական տուրքի եռապատիկի հանրագումարը:		
1.	Կառավարություն		Առաջարկում ենք նախագծերի փաթեթում ներառել նաև ««Հայաստանի Հանրապետության տավուշի մարզի դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը՝ հետևյալ բովանդակությամբ. «ՆԱԽԱԳԻԾ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ** **Օ Ր Ե Ն Ք Ը** **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** **Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան	Ընդունվել է:	Ընդունվել է:

			համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» 2015 թվականի հունիսի 23-ի ՀՕ-103-Ն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո սույն օրենքով սահմանված կարգով քաղաքաշինական թույլտվություններ չստացած և առանց թույլտվության տարածքների ինքնակամ կառուցապատման օրինականացումն արգելվում է, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ կրթական կամ մշակութային կամ համայնքային կամ պետական նշանակությամբ շահագործվող ինքնակամ կառույցների օրինականացման դեպքերի: Սույն մասով սահմանված դրույթներին չհամապատասխանող կառուցապատված տարածքները ենթակա են քանդման կառուցապատողի կողմից կամ հարկադրաբար՝ նրա միջոցների հաշվին:»: **Հոդված 2**		

			1 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»: Նշված նախագծի ներառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով Դիլիջան համայնքի համար սահմանված է հատուկ կարգավորում, համաձայն որի՝ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո դրանով սահմանված կարգով քաղաքաշինական թույլտվություններ չստացած և առանց թույլտվության տարածքների ինքնակամ կառուցապատման օրինականացումն արգելվում է: Գործող կարգավորումը խնդիրներ է առաջացնում Դիլիջան համայնքի տարածքում գտնվող և կրթական, մշակութային, համայնքային կամ պետական նշանակությամբ շահագործվող ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացի համար:		

			Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցների օրինականացման գործընթացը ներկայումս կարգավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և դրանում կատարված փոփոխություններով, ինչպես նաև կարևորելով նշված նշանակությամբ շահագործվող կառույցների հետագա գործունեության ապահովումը՝ անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահել առանձին դեպքերում բացառություններ սահմանելու լիազորություն՝ այդ կառույցների օրինականացման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով:		